

**ՁԿԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ՝
ԱԶԱՏ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՐՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Դավիթ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱԱՀ ապրանքագիտություն և մարքեթինգի ամբիոնի ասիստենտ

Բանալի բառեր. մրցակցություն, մրցակցային միջավայր, ձուկ, ձկնատեսակ, օրենսդրական դաշտ, ԵԱՏՄ, միասնական դրույքաչափ

Շուկայական ազատ մրցակցության պայմանների ձևավորման արդյունքում վերջին տարիներին զգալի փոփոխություն նկատվեց Հայաստանի Հանրապետությունում ձկան շրջանառության ոլորտում: Ձկան ներմուծմանը զուգահեռ երկրում ավելացան ձկնաբուծությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների թիվը: Այսինքն՝ ձկան շրջանառության ոլորտում տնտեսավարող սուբյեկտների ավելացումը հանրապետությունում պայմանավորված է ոչ միայն ձկնատեսակի պահանջարկով, այլև ոլորտի ազատ մրցակցային պայմաններով:

Շուկայի մրցակցային իրավիճակի կարգավորման վրա իր բարենպաստ ազդեցությունն ունի հանրապետությունում գործող իրավական դաշտը, որը հնարավորություն է տալիս մրցակիցների առավել արդյունավետ գործունեության իրականացմանը: Այսպես, գործող ՀՀ օրենսդրությամբ ձկան շրջանառության ոլորտում գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտների համար սահմանված են առանձնահատկություններ: Մասնավորապես՝ համաձայն “Եկամտային հարկի մասին” ՀՀ օրենքի, ձկնաբուծության արտադրանքը հանդիսանում է գյուղատնտեսական արտադրանք և հարկվող օբյեկտի որոշման ժամանակ գյուղատնտեսական արտադրությամբ զբաղված հարկ վճարողի համախառն եկամուտը նվազեցվում է գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի չափով, ինչպես նաև այլ գործունեությունից ստացված եկամտի չափով, եթե վերջինիս տեսակարար կշիռը գյուղատնտեսական և այլ գործունեությունից ստացված եկամուտների հանրագումարում չի գերազանցում տասը տոկոսը^{1,2}: Այլ գործունեությունից ստացված եկամուտների տեսակարար կշիռը գյուղատնտեսական և այլ գործունեությունից ստացված եկամուտների հանրագումարում տասը տոկոսը գերազանցելու դեպքում այլ եկամուտների ամբողջ գումարի չափով համախառն եկամտից նվազեցում չի կատարվում: Համաձայն “Շահութահարկի մասին” ՀՀ օրենքի՝ ձկնաբուծության արտադրանքը հանդիսանում է գյուղատնտեսական արտադրանք և շահութահարկի վճարումից ազատվում են գյու-

¹ Եկամտային հարկի մասին ՀՀ օրենք, հոդված 8, մաս 2-րդ

² Եկամտային հարկի մասին ՀՀ օրենք, հոդված 8, մաս 1-ին

ղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված հարկատուները՝ իրենց կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի, ինչպես նաև հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացված և այլ եկամուտների մասով, եթե վերջիններիս տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը^{3,4}:

Ձկան ներմուծմամբ, իրացմամբ զբաղվող ընկերությունների համար շրջանառության հարկի դրույքաչափը սահմանված է տարեկան 5%, իսկ արտադրությամբ և իրացմամբ զբաղվող ընկերությունների համար շրջանառության հարկի դրույքաչափը կազմում է տարեկան 3,5%: Եթե վերջիններիս նախորդ տարվա շրջանառությունը գերազանցել է 115 մլն դրամը (ԱԱՀ շեմ: Մինչև 2015 թվականը շրջանառության շեմը կազմում էր 58.35 մլն դրամ), ապա այդ ընկերությունները հանդիսանում են ԱԱՀ վճարող, որի դեպքում հարկման դրույքաչափը կազմում է 20%: Այս առումով պետք է նշել, որ 2016թ. հոկտեմբերի 4-ին ընդունվել է ՀՀ հարկային օրենսգիրքը, որով ԱԱՀ շեմը կրկին սահմանվել է 58.35 մլն դրամ, որը գործելու է 2019թ. հունվարից:

Աղյուսակ 1. Երրորդ երկրներից ՀՀ ներմուծված ձկան տեսակների ներմուծման մաքսային դրույքաչափերը՝ համաձայն ՀՀ-ի՝ ԵՏՄ-ին անդամակցելու պայմանագրի⁵ (%)

| Ապրանքի անվանում | Կենդանի ձուկ | Թարմ կամ պաղեցված ձուկ | Սառեցված ձուկ | Թարմ կամ պաղեցված ձկան ֆիլե | Չորացրած ձուկ |
|--|--------------|------------------------|---------------|-----------------------------|---------------|
| ԵԱՏՄ միասնական մաքսային սակագների դրույքաչափ | 7,3-10,0 | 6,0-9,8 | 3,0-8,0 | 3,0-7,5 | 5,0-16,0 |

Ձկան շրջանառության ոլորտում առկա են ձկան տեսակների ներմուծման որոշակի սահմանափակումներ: Մասնավորապես, ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության հրապարակած Երրորդ երկրների ցանկ, որտեղ, ըստ ԱՏԳԱԱ-ի և երկրների, ներկայացված է այն կազմակերպությունները, որտեղից թույլատրվում է ներմուծել համապատասխան ապրանքը (տես՝ աղյուսակ 2): Ձկան ներմուծման դեպքում մինչև ԵԱՏՄ-ին անդամագրվելը ձկան ներմուծման դեպքում մաքսատուրքի դրույքաչափը մաքսային արժեքի 10 տոկոսն էր (բացառությամբ կենդանի ձկան, երբ այն մաքսային արժեքի 0 տոկոսն էր), իսկ ԱԱՀ-ն՝ մաքսային արժեքի և մաքսատուրքի հանրագումարի 20 տոկոսը: 2015թ.

³ Շահութահարկի մասին ՀՀ օրենք, հոդված 36, մաս 2-րդ

⁴ Շահութահարկի մասին ՀՀ օրենք, հոդված 36, մաս 1-ին

⁵ <http://www.eurasiancommission.org/ru/act/trade/catr/ett/Documents/ru.cct.eaeu.02.pdf>

հունվարի 1-ից՝ ԵԱՏՄ-ին անդամակցությունից հետո ԵԱՏՄ ոչ անդամ երկրներից ձուկ ներմուծելիս մաքսատուրքի դրույքաչափի արտոնություն չկա, ուստի կիրառվում են ԵԱՏՄ միասնական մաքսային սակագների դրույքաչափերը, որոնք տատանվում են 3-16 տոկոսի սահմաններում՝ կախված ներմուծվող ձկան ներմուծման վիճակից (թարմ, պաղեցված և այլն) և տեսակից:

Աղյուսակ 2. Երրորդ երկրների կազմակերպությունների ռեեստրում գրանցված կազմակերպությունների քանակները⁶

| Երկրի անվանումը | Կազմակերպությունների քանակը |
|-----------------|-----------------------------|
| Վիետնամ | 12 |
| Նորվեգիա | 11 |
| Իսպանիա | 9 |
| Վրաստան | 9 |
| Գերմանիա | 6 |
| Պերու | 6 |
| Նիդեռլանդներ | 4 |
| Չինաստան | 3 |

Աղյուսակ 2-ում ներկայացված են 33 ներմուծվող բոլոր տեսակի ձկան մսի (ԱՏԳԱԱ 0301-ԱՏԳԱԱ 0305) մասով, ըստ երկրների քանակները, որոնցից հնարավոր է ներմուծել համապատասխան տեսակի ձուկը: Հաշվի առնելով, որ 33 ձկան ներմուծման հիմնական երկրներն են Վիետնամը, Նորվեգիան և Վրաստանը, ապա առավել հետաքրքրական է դրանց մասով սահմանափակումների ուսումնասիրումը: Ցանկացած տեսակի և վիճակի (թարմ, պաղեցված և այլն) ձուկ թույլատրվում է ներմուծել 33 Վիետնամի 12, Նորվեգիայի 11 և Վրաստանի 9 կազմակերպություններից: Ձկան տեղական արտադրության համար 33 կառավարության 2014թ. «Ապրիլի շահագործվող, ինչպես նաև չչահագործվող հորատանցքերի համար ջրօգտագործման թույլտվությունների, դրանց կարգը հաստատելու մասին» թիվ 340-Ն և նույն տարվա «Արարատյան, Հրազդանի և Ախուրյանի ավազանային կառավարման տարածքներում սակավաջրության և երաշտի մասին» թիվ 1111-Ն որոշումներով ստեղծված են որոշակի սահմանափակումներ: Այսպես, ջրօգտագործման թույլտվություն ունեցող և չհորատված հորատանցքերի համար շինարարական և ջրօգտագործման թույլտվության տրամադրումը 33 Արարատի և Արմավիրի մարզերում արգելվել է, իսկ Արարատյան, Հրազդանի, Ախուրյանի տարածքներում սահմանվել է սակավաջրություն, և նշված տարածքներում կատարվել են ջրի ծավալների և ռեժիմների սահմանափակումներ:

⁶ <http://www.snund.am/>

Անհրաժեշտ է նշել, որ վերոնշյալ որոշումները սահմանափակում են ոլորտի մրցակցությունը, քանզի ներմուծման դեպքում սահմանափակ թվով թույլատրելի մատակարարների առկայության դեպքում ընկերությունները կարող են սահմանել որոշակի չափորոշիչներ (վաճառքի նվազագույն շեմեր և այլն), որոնց բավարարման դեպքում մատակարար ընկերությունները կարող են համագործակցել պոտենցիալ գնորդ հայաստանյան կազմակերպությունների հետ: Որպես հետևանք, կարող է սահմանափակվել այն ընկերությունների թիվը, որոնք կարող են ներմուծել Հայաստան: Խոսքն, առաջին հերթին, վերաբերում է փոքր ընկերություններին, որոնց ֆինանսական ռեսուրսները փոքր են, ուստի դրանց համար դժվարությունները ավելի շատ են: Մյուս կողմից, այդ սահմանափակումները դրված են սննդի անվտանգության ապահովման տեսանկյունից: Ինչ վերաբերում է ՀՀ կառավարության որոշումներով ձևավորված արտադրության նկատմամբ կիրառված սահմանափակումներին, ապա դրանք, մի կողմից, կարող են սահմանափակել ոլորտի մրցակցությունը, քանի որ ՀՀ Արմավիրի և Արարատի մարզերում ջրօգտագործման նոր թույլտվությունների տրամադրման դադարեցումը կարող է տվյալ տարածքում շուկա մուտքի արգելք հանդիսանալ նոր տնտեսվարողների համար, իսկ Արարատյան, Հրազդանի, Ախուրյանի ավազանային կառավարման տարածքներում ջրօգտագործման ծավալների և (կամ) ռեժիմների սահմանափակումների ներդրումը կարող է ստեղծել անհավասար մրցակցային պայմաններ: Մյուս կողմից, նման սահմանափակումները բխում են բնապահպանական նկատառումներից, իսկ դրանց ներդրումը կարող է նաև խթանել ոլորտի զարգացումը, քանի որ տնտեսվարողները նշված սահմանափակումների հետևանքները հաղթահարելու համար ստիպված կլինեն ներդնել նոր տեխնոլոգիաներ, ինչը հեռանկարում կարող է ապահովել ինքնարժեքի նվազում, ինչն էլ կարող է բարձրացնել ընկերությունների մրցունակությունը և նպաստել արտահանման ծավալների ընդլայնմանը:

Այսպիսով, ձևավորված շրջանառության ոլորտում իրավական դաշտի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ոլորտում մրցակցությունը խոչընդոտող իրավական երևույթ են դիտարկվում մաքսային ընթացակարգերը, մասնավորապես՝ ձևավորված վաճառքի համար ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդի անվտանգության պետական ծառայության թույլտվության ժամկետները, որոնց ձգձգումը բացասաբար է ազդում իրացման ծավալների և ինքնարժեքի մակարդակի վրա: Ուստի, կարծում ենք, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ձկնատեսակները իրացման համար ժամկետային խնդիր ունեցող ապրանքներ են, անհրաժեշտ է վերանայել մաքսային ընթացակարգերը և առավել նպաստավոր պայմաններ ստեղծել տնտեսվարող սուբյեկտների համար, որոնք, իրենց հերթին, կնպաստեն մրցակցային հավասար պայմաններին:

Դավիթ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ձկան շրջանառության ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը՝ ազատ մրցակցության ապահովման գործընթացում

Բանալի բառեր. մրցակցություն, մրցակցային միջավայր, ծուկ, ձկնատեսակ, օրենսդրական դաշտ, ԵԱՏՄ, միսնական դրույքաչափ

«Եկամտային հարկի մասին» և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքների, ձկնաբուծության արտադրանքը հանդիսանում է գյուղատնտեսական արտադրանք և ձկան շրջանառության ոլորտում գործունեություն ծավալող տնտեսվարող սուբյեկտների համար սահմանված են առանձնահատկություններ: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ոլորտում մրցակցությունը խոչընդոտող իրավական երևույթ են դիտարկվում մաքսային ընթացակարգերը, մասնավորապես՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդի անվտանգության պետական ծառայության թույլտվության ժամկետները: Դրանց ձգձգումը բացասաբար է ազդում մրցակցության վրա, հետևաբար անհրաժեշտ է վերանայել մաքսային ընթացակարգերը և առավել նպաստավոր պայմաններ ստեղծել տնտեսվարող սուբյեկտների համար:

David HOVHANNISYAN

Legal framework regulating fish production in ensuring free competition

Key words: competition, competitive environment, fish, legal framework, EAEU, common rate

According to RA Laws on “Income tax” and “Profit tax” fish production is considered an agricultural production and there are special privileges established for companies functioning in fishery. However, research shows that there are regulatory obstacles in customs administration particularly in terms of delays for obtaining license issued by state agency for food safety of RA Ministry of Agriculture. The delays have a negative impact on competition, and thus there is need to review custom procedures and establish a more enabling environment for companies active in the sector.

Давид ОГАНЕСЯН

Законодательство, регулирующее сферу обращения товарного рынка рыбы в процессе обеспечения свободной конкуренции

Ключевые слова: конкуренция, конкурентная среда, рыба, видовой ассортимент рыбы, законодательство, Евразийский экономический союз (ЕАЭС), единый тариф

В соответствии с Законами РА «О подоходном налоге» и «О налоге на прибыль», продукция рыбоводства является сельскохозяйственной продукцией. Для хозяйствующих субъектов, действующих в сфере обращения рыбы согласно вышеуказанным законам предусмотрены особенные положения. Однако исследования показывают, что ограничивающими конкуренцию в данной сфере правовыми проявлениями являются таможенные процедуры, в частности, сроки разрешений, выданные Государственной службой по безопасности пищевых продуктов Министерства сельского хозяйства Республики Армения. Задержка их выдачи негативно влияет на конкуренцию, поэтому необходимо пересмотреть таможенные процедуры и создать более благоприятные условия для хозяйствующих субъектов.